1000 խոշոր հարկատուների կողմից 2022թ. հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի վերլուծություն

2022թ. հունվար-մարտ ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է 327 մլրդ դրամ, ինչը 67 մլրդ դրամով կամ շուրջ 26%-ով ավելի է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից, նաև՝ զգալիորեն գերազանցում է 2020թ. մակարդակը (գծապատկեր 1): Հարկ է նկատել, որ 1000 հարկատուների ցանկում ներառվել են ոչ միայն տնտեսվարող սուբյեկտները, այլ նաև պետական կառավարչական հիմնարկները, այդ թվում՝ նախարարությունները, այլ գերատեսչություններ: Նույն կերպ կազմված են նաև 2020-ի և 2021-ի առաջին եռամսյակի ցանկերը, ուստի համեմատական վերլուծությունը կատարվում է հենց այդ տարիների ընդգրկմամբ:



Գծապատկեր 1. Հունվար-մարտ ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

2022թ. առաջին 3 ամիսներին, նախորդ երկու տարիների նույն ժամանակահատվածի համեմատությամբ, ավելացել է նաև 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը: Այսպես, 2022-ի հունվար-մարտ ժամանակահատվածում 10 խոշորագույն հարկատուները պետական բյուջե են վճարել մոտ 96 մլրդ դրամ հարկ, ինչը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է շուրջ 30 մլրդ դրամով կամ 46%-ով (գծապատկեր 2): 100 խոշոր հարկատուները, 2021թ. համեմատ, վճարել են 48 մլրդ դրամով ավելի շատ հարկ, իսկ 2020թ. ցուցանիշը գերազանցել են մոտ 30 մլրդ դրամով:



Գծապատկեր 2. Հունվար-մարտ ամիսներին 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

Ցանկի վերջին հարյուրակում գտնվող հարկատուների վճարումները 2022թ. հունվար-մարտ ամիսներին կազմել է 5,6 մլրդ դրամ՝ 2021-ի 4,6 մլրդ դրամի փոխարեն (գծապատկեր 3): Այսինքն, համեմատաբար փոքր հարկատուների պարագայում նախորդ երկու տարիների համեմատությամբ ևս որոշակի ընդլայնում կա:



Գծապատկեր 3. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 փոքրագույն հարկատուների կողմից հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

1000 հարկատուների ցանկում առաջին և վերջին 100-յակի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության հարաբերակցությունը 2022թ. առաջին 3 ամիսների համար կազմել է 36 անգամ, նախորդ տարի՝ 33 անգամ: Առաջին

և վերջին տասնյակի հարկատուների վճարած հարկերի հարաբերակցությունը 2022-ին 182 անգամ է, ինչը զգալիորեն բարձր է նախորդ տարվա համեմատությամբ: (գծապատկեր 4):



Գծապատկեր 4. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 խոշորագույն և փոքրագույն հարկատուների կողմից հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի հարաբերակցությունը, անգամ

2022թ. հունվար-մարտ ամիսների արդյունքներով ՀՀ-ում գործող 52 ընկերություն վճարել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր: 2021-ին այդպիսի ընկերությունների թիվը 42 էր, 2020-ին՝ 50: Նույն կերպ, 2022-ի հունվար-մարտ ամիսների արդյունքներով, 118 ընկերության հարկային վճարումների գումարը գերազանցել է 500 մլն դրամը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում այդպիսի ընկերությունների թիվը 100 էր, իսկ 2020-ին՝ ավելի պակաս՝ 95:



Գծապատկեր 5. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված հարկատուների թվաքանակը՝ ըստ հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի մեծության

Հետաքրքրական է, որ նախորդ տարվա առաջին երեք ամիսների արդյունքներով, 1000 հարկատուների ցանկում ընդգրկված ընկերություններից 121-ը վճարել էին 50 մլն դրամից պակաս հարկ: 2020-ին այդպիսի ընկերությունների թիվը ավելի շատ էր՝ 167, մինչդեռ 2020թ. առաջին եռամսյակի ցանկում այդպիսի հարկատուներ բացակայում են (գծ. 5): Ավելին, 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառվելու համար 2022թ. առաջին եռամսյակում պետք էր վճարել առնվազն 52,2 մլն դրամի հարկ, այն դեպքում, երբ նախորդ տարի դրա համար բավարար կլիներ 43 մլն դրամը, իսկ 2020-ին՝ 41 մլն դրամից մի փոքր ավելին:

2022-ի հունվար-մարտ ամիսների արդյունքներով, ՀՀ-ում 43 ընկերություն վճարել է 100 մլն դրամից ավելի շահութահարկ: Նախորդ տարի այդպիսի ընկերությունների թիվը 38 էր: Նույն կերպ, 155 ընկերության կողմից վճարված եկամտային հարկի մեծությունը գերազանցել է 100 մլն դրամը, նախորդ տարվա համեմատությամբ այսպիսի ընկերությունների թիվը ավելացել է 15-ով (գծապատկեր 6):



Գծապատկեր 6. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված շահութահարկի և եկամտային հարկի մեծության

Մեկ այլ կարևոր միտում է 1000 հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում ուղղակի հարկերի (շահութահարկ և եկամտային հարկ) տեսակարար կշռի նվազումը: Այս միտումը դիտարկվող ժամանակահատվածում ընդգծված բնույթ ունի: Այսպես, 2022թ. առաջին եռամսյակում 1000 հարկատուների վճարած հարկերի ընդհանուր մեծության 33,1%-ը կազմել են ուղղակի հարկերը: Նախորդ տարի այս ցուցանիշը 36% էր, 2020-ին՝ 38.4% (գծապատկեր 7):

1000 հարկատուների ցանկի առաջին 100 ընկերությունների հարկային վճարումների ընդհանուր մեծության 34.4%-ը ուղղակի հարկերն են: 2020-ին այս ցուցանիշը եղել է 37.4%:



Գծապատկեր 7. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի տեսակարար կշիռը վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում, %

2022թ. առաջին երեք ամիսների արդյունքներով, 37 ընկերության ուղղակի հարկի վճարումները գերազանցել են 500 մլն դրամը: Նախորդ տարի այդպիսի կազմակերպությունների թիվը 29 էր, սակայն 2020-ին ավելի շատ էր՝ 40 ընկերություն:

2022թ. հաշվետու ժամանակահատվածում 100 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել ավելի քան 200 կազմակերպություններ, նախորդ երկու տարիների ընթացքում այդպիսի կազմակերպությունների թիվը չի գերազանցել 182-ը (գծապատկեր 8):



Գծապատկեր 8. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի մեծության

Այսպիսով, 2022թ. հունվար-մարտ ժամանակահատվածում 1000 հարկատուների ցանկի առաջին հարյուրակում տեղ զբաղեցրած միջին վիճակագրական ընկերության՝ ՀՀ պետական բյուջե կատարված հարկային վճարումների կազմն ու կառուցվածը որոշակիորեն տարբերվում է նախորդ տարիների պատկերից:

Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2022-ի առաջին եռամսյակում վճարել է շուրջ 2 մլրդ դրամի հարկ (2021-ին՝ 1,5 մլրդ դրամ, 2020-ին՝ 1.7 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 224 մլն դրամ (2021-ին՝ 107 մլն դրամ, 2020-ին՝ 236 մլն դրամ), եկամտային հարկը՝ 407 մլն դրամ (2021-ին՝ 414 մլն դրամ, 2020-ին՝ 402 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 764 մլն դրամ (2021-ին՝ 665 մլն դրամ, 2020-ին՝ 693 մլն դրամ), ակցիզային հարկը՝155 մլն դրամ (2021-ին՝ 123 մլն դրամ, 2020-ին՝ 214 մլն դրամ):

Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2022թ. առաջին երեք ամիսների արդյունքներով վճարել է 56 մլն դրամի հարկ (2021-ին՝ 46 մլն դրամ, 2020-ին՝ 43.6 մլն դրամ), շահութահարկը՝ 4 մլն դրամ (2021-ին՝ 3,9 մլն դրամ, 2020-ին՝ 3.3 մլն դրամ), եկամտային հարկը՝ 13.4 մլն դրամ (2021-ին՝ 13.9 մլն դրամ, 2020-ին՝ 14.2 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 27.9 մլն դրամ (2021-ին՝ 20,8 մլն դրամ, 2020-ին՝ 20 մլն դրամ):

Խոշոր հարկատուների պարագայում առկա է տարածքային խիստ անհավասարաչափ բաշխվածություն: Այսպես, 1000 խոշոր հարկատուների ցանկի սուբյեկտների 82%-ը գրանցված է Երևանում: Նրանց բաժին է ընկնում ընդամենը հարկային մուտքերի 75%-ը, շահութահարկի 54%-ը, եկամտային հարկի 89%-ը ԱԱՀ 83%-ը, ակցիզային հարկի 77%-ը:

1000 հարկատուների ցանկի առաջին հորիզոնականում Զանգեզուրի ՊՄԿ-ն է՝ 35,4 մլրդ դրամ վճարած հարկերի ընդհանուր մեծությամբ: Զանգեզուրի ՊՄԿ-ին բաժին է ընկնում 1000 հարկատուների ցանկում ներառված բոլոր հարկատուների վճարած հարկերի ընդհանուր մեծության 10,8%-ը: Նախորդ տարվա առաջին եռամսյակում այս ընկերության մասնաբաժինը ընդամենը 3,8% էր, իսկ 2020-ին՝ 1,9% (գծապատկեր 9):

Առաջին 10 հարկատուների մասնաբաժինը մոտ 30% է, ինչը ևս բարձր է նախորդ տարիների համեմատությամբ: Իսկ խոշորագույն 100-ին բաժին է ընկնում ցանկի բոլոր հարկատուների կատարած հարկային վճարումների ընդհանուր մեծության 61%-ը, մինչդեռ օրինակ վերջին 100-յակի մասնաբաժինն ընդհանուրում միայն 1,7% է:



Գծապատկեր 9. Զանգեզուրի ՊՄԿ և հարկատուների առանձին խմբերի վճարած հարկերի մասնաբաժինը 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված հարկատուների վճարած հարկերի ընդհանուր ծավալում, տոկոսներով, ըստ հունվար-մարտ ամիսների

Աղյուսակ 1-ում ներկայացված է 1000 հարկատուների ցանկի վերին հորիզոնականներում տեղ գբաղեցրած մի շարք կազմակերպությունների կողմից հունվար-մարտ ամիսներին պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության դինամիկան 2020-2021թթ. ընթացքում: Ընտրված թվով 40 կազմակերպությունների կեսից ավելին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ որոշակիորեն ավելացրել են վճարված հարկերի մեծությունը: Այստեղ կարելի է նշել հանքահումքային և հեռահաղորդակցության ոլորտների առաջատարներին, նաև բնական մենաշնորհ հանդիսացող կազմակերպություններին:

Աղյուսակ 1. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված առանձին հարկատուների կողմից հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը և տեղը հարկատուների ցանկում

Տեղը ցանկում		Հարկատու	Վճարած հարկերը, մլրդ դրամ			Տարբ. 2021-ի համեմատ., մլրդ դրամ
2021թ.	2022թ.		2020	2021	2022	
3	1	«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»	5.1	9.8	35.4	25.6
1	2	«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ»	17.8	18.7	20.1	1.4
2	3	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»	8.9	15.1	8.6	-6.5

7	4	«ԳՐԱՆԴ ՏՈԲԱԿՈ»	12.3	3.1	7.9	4.8
4	5	«ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ»	5.1	4.1	5.9	1.8
8	6	«ՖԼԵՇ»	3.1	3.1	3.85	0.8
18	7	«ԹԵՂՈՒՏ»	4.7	1.6	3.83	2.2
21	10	«ՍՈՖԹ ԿՈՆՍՏՐԱԿՏ»	0.37	1.3	3.1	1.8
6	11	«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ»	3.4	3.5	2.9	-0.6
57	12	«ՄԱՔՍ ՕԻԼ»	0.09	0.8	2.7	1.9
9	13	«ՖԻԼԻՊ ՄՈՐՐԻՍ ԱՐՄԵՆԻԱ»	3.88	2.6	2.6	0.0
16	14	«ՍԻԹԻ»	2.4	1.7	2.55	0.9
35	15	«ԱԼԵՔՍ ԷՆԴ ՀՈԼԴԻՆԳ»	1.6	1.1	2.5	1.4
12	16	«ՅՈՒՔՈՄ»	2	2.4	2.4	0.0
40	17	«ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ»	1.7	1	2.33	1.3
10	18	«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ»	4.4	2.6	2.14	-0.5
13	19	«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»	2.47	2	2.1	0.1
15	22	«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ «ՏՐԱՆՍԳԱԶ»	2.2	1.9	1.9	0.0
32	23	«ՉԱԱՐԱՏ ԿԱՊԱՆ»	1.35	1.1	1.8	0.7
17	24	ԱԿԲԱ ԲԱՆԿ	1.45	1.7	1.7	0.0
20	25	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	1.4	1.5	1.55	0.1
19	28	«ԲԱՂՐԱՄՅԱՆ»	0.56	1.5	1.5	0.0
22	32	«ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ՔԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ»	1.13	1.3	1.4	0.1
24	33	ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ	1.23	1.3	1.4	0.1
36	34	«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ»	6.57	1.1	1.35	0.3
23	36	«ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ»	1.05	1.3	1.3	0.0
29	38	«ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ»	1.18	1.2	1.3	0.1
44	39	«ՍԱՍ-ԳՐՈՒՊ»	1.1	1	1.27	0.3
33	42	«ՍԻՆՈՓՍԻՍ ԱՐՄԵՆԻԱ»	1.1	1.1	1.15	0.0
58	45	ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ	0.7	0.8	1.1	0.3
34	50	«ՍԼԱՎ ԳՐՈՒՊ»	0.75	1.1	1.04	-0.1
26	54	«ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ»	1.2	1.2	1	-0.2
39	55	ԱՐԴՇԻՆԲԱՆԿ	1.1	1	1	0.0
31	56	«ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ»	1.32	1.1	1	-0.1
43	58	ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ	1.1	1	1	0.0
38	61	«ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ»	1.1	1	0.9	-0.1
55	62	«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ»	1.1	0.8	0.9	0.1
45	70	ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ	0.7	1	0.78	-0.2
48	108	«ԱԹԵՆՔ»	0.5	0.9	0.5	-0.4
60	111	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	0.57	0.8	0.5	-0.3

Ամփոփում

1000 հարկատուների ցանկում ներառված կազմակերպությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը 2022թ. հունվար-մարտ ամիսների արդյունքներով որոշակի ծավալային և կառուցվածքային փոփոխություններ է արձանագրել՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ.

- ✓ վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է ավելի քան 327 մլրդ դրամ, ինչը 26%-ով կամ 67 մլրդ դրամով ավելի է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից, իսկ 2020թ. մակարդակը գերազանցում է 52 մլրդ դրամով
- ✓ 100 խոշորագույն հարկատուների կողմից վճարվել է շուրջ 200 մլրդ դրամի հարկ, որը 48 մլրդ դրամով ավելի է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից,
- ✓ 1000 հարկատուների ցանկում ներառված 100 ամենափոքր ընկերությունները 2022-ի առաջին եռամսյակում վճարել են 5,6 մլրդ դրամ կամ նախորդ տարվա համեմատությամբ՝ 22%-ով ավելի,
- ✓ 1000 հարկատուների ցանկում ներառված ընկերությունների վճարած հարկերի անհամաչափության աստիճանի աճ է գրանցվել: Ցանկի ամենախոշոր և ամենափոքր 10 ընկերությունների վճարած հարկերի ընդհանուր մեծության հարաբերակցությունը 2022թ. հունվար-մարտին կազմել է 182 անգամ, նախորդ տարվա 154 անգամի համեմատությամբ: Ամենախոշոր և ամենափոքր 100 ընկերությունների պարագայում նույն հարաբերակցությունը կազմել է 36, ինչը ևս բարձր է նախորդ տարիների մակարդակից,
- ✓ Խոշոր հարկատուների պարագայում առկա է տարածքային խիստ անհավասարաչափ բաշխվածություն: Այսպես, 1000 խոշոր հարկատուների ցանկի սուբյեկտների 82%-ը գրանցված է Երևանում: Նրանց բաժին է ընկնում ընդամենը հարկային մուտքերի 75%-ը, շահութահարկի 54%-ը, եկամտային հարկի 89%-ը ԱԱՀ 83%-ը, ակցիզային հարկի 77%-ը:
- ✓ 2022թ. առաջին եռամսյակի արդյունքներով՝
  - ՀՀ-ում գործում է 1 մլրդ դրամից ավելի հարկեր վճարած 52 սուբյեկտ, նախորդ տարի՝ 42,
  - 500 մլն դրամից ավելի հարկեր վճարած ընկերությունների և գերատեսչությունների թիվը 118 է (2021-ին՝ 100, 2020-ին՝ 95),

- 1000 խոշոր հարկատուների ցանկում չեն ընդգրկվել 50 մլն դրամից պակաս հարկ վճարած ընկերությունները: Նախորդ տարի ցանկում ներառված էր 121 այդպիսի հարկատու, 2020-ին՝ 167,
- 43 ընկերության վճարած շահութահարկի մեծությունը գերազանցել է 100 մլն դրամը (2021-ին ցանկում կար 38 այդպիսի ընկերություն, 2020-ին՝ 49):
- 155 հարկատու գերազանցել է եկամտային հարկի՝ 100 մլն դրամի շեմը (2021-ին և 2020-ին՝ 140),
- ուղղակի հարկերի տեսակարար կշիռը 1000 հարկատուների ցանկում ներառված սուբյեկտների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի կառուցվածքում նվազել է և կազմել է 33,1% (2021-ին՝36,0%, 20210-ին՝38,04%),
- 100 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել 203 սուբյեկտներ (2021-ին՝ 178, 2020-ին՝ 182):

✓ Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2022-ի առաջին եռամսյակում վճարել է շուրջ 2 մլրդ դրամի հարկ (2021-ին՝ 1,5 մլրդ դրամ, 2020-ին՝ 1.7 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 224 մլն դրամ (2021-ին՝ 107 մլն դրամ, 2020-ին՝ 236 մլն դրամ), եկամտային հարկը՝ 407 մլն դրամ (2021-ին՝ 414 մլն դրամ, 2020-ին՝ 402 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 764 մլն դրամ (2021-ին՝ 665 մլն դրամ, 2020-ին՝ 693 մլն դրամ), ակցիզային հարկը՝155 մլն դրամ (2021-ին՝ 123 մլն դրամ, 2020-ին՝ 214 մլն դրամ):

✓ Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2022թ. առաջին երեք ամիսների արդյունքներով վճարել է 56 մլն դրամի հարկ (2021-ին՝ 46 մլն դրամ, 2020-ին՝ 43.6 մլն դրամ), շահութահարկը՝ 4 մլն դրամ (2021-ին՝ 3,9 մլն դրամ, 2020-ին՝ 3.3 մլն դրամ), եկամտային հարկը՝ 13.4 մլն դրամ (2021-ին՝ 13.9 մլն դրամ, 2020-ին՝ 14.2 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 27.9 մլն դրամ (2021-ին՝ 20,8 մլն դրամ, 2020-ին՝ 20 մլն դրամ):

✓ 1000 հարկատուների ցանկի առաջին հորիզոնականում Զանգեզուրի ՊՄԿ-ն է՝ 35,4 մլրդ դրամ վճարած հարկերի ընդհանուր մեծությամբ: Զանգեզուրի ՊՄԿ-ին բաժին է ընկնում 1000 հարկատուների ցանկում ներառված բոլոր հարկատուների վճարած հարկերի ընդհանուր մեծության 10,8%-ը: Նախորդ տարվա առաջին եռամսյակում այս ընկերության մասնաբաժինը ընդամենը 3,8% էր, իսկ 2020-ին՝ 1,9%:

- ✓ Առաջին 10 հարկատուների մասնաբաժինը մոտ 30% է, ինչը ևս բարձր է նախորդ տարիների համեմատությամբ: Իսկ խոշորագույն 100-ին բաժին է ընկնում ցանկի բոլոր հարկատուների կատարած հարկային վճարումների ընդհանուր մեծության 61%-ը, մինչդեռ օրինակ վերջին 100-յակի մասնաբաժինն ընդհանուրում միայն 1,7% է: